

**ԸՍՏ ՄԵՂՔԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍՊՐՔՈՒՄ**

Միսակ Մերուժանի Մարկոսյան

ի.գ.թ., դոցենտ

ՀՀ ոստիկանության կրթահամալիր

misakmmm100@gmail.com

Ամփոփագիր

Հոդվածում փրվում են մեղքի հոգեբանական հայեցակարգի և արժեքաբանական (նորմատիվիստական) հայեցակարգի համառոտ բնութագրերը, ներկայացվում են ՀՀ նոր քրեական օրենսգրքում մեղքի հոգեբանական հայեցակարգից արժեքաբանական (նորմատիվիստական) հայեցակարգին անցում կատարելու հիմնավորումները, մատնանշվում են հոգեբանական հայեցակարգի հիմնական թերությունները:

Հեղինակը ներկայացնում է մեղքի և հանցանքի սուբյեկտիվ կողմի (դիտարկության ու անզգուշության) հարաբերակցությունը մեղքի արժեքաբանական (նորմատիվիստական) հայեցակարգի համատեքստում, վերլուծության է ենթարկում գերմանական քրեական իրավունքում մեղքի գործառույթները (հիմնավորող և չափող): Հեղինակը հանգում է այն հետևության, որ ՀՀ նոր քրեական օրենսգրքում օրենսդիրը մեղքին վերապահել է միայն հիմնավորող գործառույթը: Այդ պատճառով հայրենական քրեական իրավունքում դիտարկությունը և անզգուշությունը չունեն մեղքի հետ այնպիսի սերտ կապ, ինչպիսին գերմանական քրեական իրավունքում է: Ըստ հեղինակի՝ ՀՀ նոր քրեական օրենսգրքում դիտարկությունն ու անզգուշությունը կարող են դիտարկվել միայն որպես սուբյեկտիվ կողմի դրսևորումներ, բայց ոչ որպես մեղքի աստիճաններ կամ մեղքի ձևեր:

Նոր քրեական օրենսգրքում փեղ գտած՝ մեղքին վերաբերող իրավակարգավորումների համակարգային վերլուծության հիման վրա հեղինակը հանգում է հետևության, որ ՀՀ նոր քրեական օրենսգրքում փրված՝ ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքի օրենսդրական սահմանումն ամբողջությամբ չի համապատասխանում մեղքի արժեքաբանական (նորմատիվիստական) հայեցակարգից բխող՝ մեղքի օրենսդրական բնորոշմանը:

Կատարված հետազոտության արդյունքների հիման վրա հեղինակը ներկայացնում է ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքի նոր սահմանման վերաբերյալ օրենսդրական առաջարկություն:

Հիմնաբառեր. հանցանք, մեղք, հոգեբանական հայեցակարգ, արժեքաբանական հայեցակարգ, դիտարկություն, անզգուշություն:

Ներածություն

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2021 թվականի մայիսի 5-ին ընդունվեց ՀՀ նոր քրեական օրենսգիրքը (այսուհետ՝ նոր քր.օր.): Նոր

քր.օր.-ի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված էր նախկին քրեական օրենսգրքի մի շարք թերություններով, որոնք ՀՀ նոր քրեական օրենսգրքի հայեցակար-

գում դասակարգվել էին հետևյալ տեսակների՝ հայեցակարգային անճշտություններ և կրիմինալոգիական իրականության անտեսում, սխալներ և հակասություններ, բացեր: Հայեցակարգում որպես նախկին քրեական օրենսգրքի հայեցակարգային անճշտություն նշվել էր նաև ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքի ձևակերպումը:

Սույն հետազոտության նպատակն է վերհանել նոր քր.օր.-ում մեղքի հոգեբանական հայեցակարգից արժեքաբանական (նորմատիվիստական) հայեցակարգին անցում կատարելու հիմնավորումները, բացահայտել արժեքաբանական (նորմատիվիստական) հայեցակարգի համատեքստում մեղքի բովանդակությունը և դրա հարաբերակցությունը հանցագործության սուբյեկտիվ կողմի հետ, գնահատել ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքի օրենսդրական բնորոշման համապատասխանությունը մեղքի արժեքաբանական հայեցակարգին և ներկայացնել այդ սկզբունքի օրենսդրական բնորոշման հեղինակային տարբերակը:

Հետազոտության օբյեկտն այն հասարակական հարաբերություններն են, որոնք ծագում են մեղքի ինստիտուտի օրենսդրական սահմանման և գործնականում դրա կիրառման կապակցությամբ: Հետազոտության առարկան նոր քր.օր.-ում ամրագրված մեղքի ինստիտուտն է:

Հետազոտությունն իրականացվել է տրամաբանական, համակարգային, գործառնության, պատմական և իրավահամեմատական մեթոդների կիրառմամբ:

1. Ընդհանուր դրույթներ

ՀՀ նոր քրեական օրենսգրքի հայեցակարգի 4.1.(2) կետում նշվել էր՝ «Քրեական իրավունքի հիմնարար սկզբունքներից է ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքը: Քրեական իրավունքի տեսության մեջ մեղքի վերաբերյալ առկա են երեք հիմնական հայե-

ցակարգեր՝ վտանգավոր վիճակի, նորմատիվիստական և հոգեբանական: ՀՀ քրեական օրենսդրությունը հիմնված է հոգեբանական հայեցակարգի վրա, որի հիմնական դրույթը հանգում է նրան, որ մեղքը անձի հոգեբանական վերաբերմունքն է իր արարքի և դրա վտանգավոր հետևանքների նկատմամբ և դրսևորվում է դիտավորության կամ անզգուշության ձևերով: Սակայն հոգեբանական հայեցակարգը հաճախ թույլ չի տալիս ապահովելու արդարությունը և հաշվի առնելու կրիմինալոգիական իրողությունները (...): Ըստ հայեցակարգի 5.1. կետի՝ «Ավանդաբար ՀՀ քրեական իրավունքի տեսությունը և օրենսդրությունը հիմնվում են մեղքի հոգեբանական տեսության վրա: Բայց այս տեսության շրջանակներում հաճախ հնարավոր չի լինում քրեաիրավական շատ խնդիրների արդարացի լուծում գտնել: Դրա պատճառն այն է, որ քրեական իրավունքը արժեքաբանական, նորմատիվիստական գիտություն է: Այն կապված է գնահատականներ տալու հետ: Առանց արժեքաբանական մոտեցման քրեական իրավունքը կդադարի իրավունք լինելուց» [ՀՀ կառավարության 04.06.2015թ. N 25 արձանագրային որոշում]:

Նոր քր.օր.-ի հայեցակարգի մեջբերված դրույթներին համապատասխան՝ նոր քր.օր.-ում մեղքի հոգեբանական հայեցակարգից անցում է կատարվել նորմատիվիստական (արժեքաբանական) հայեցակարգին:

2. Մեղքի հոգեբանական հայեցակարգի համառոտ բնութագիրը

Ինչպես գիտենք, մեղքի հոգեբանական հայեցակարգի համաձայն մեղքը անձի հոգեբանական վերաբերմունքն է իր արարքի և դրա հանրորեն վտանգավոր հետևանքների նկատմամբ: Մեղքի հոգեբանական հայեցակարգը բնութագրվում է դասակարգման հստակ համակարգով, որը ներառում է սեռային և տեսակային հասկացություններ (դիտա-

վորությունը և անզգուշությունը որպես մեղքի ձևեր, դրանց տեսակները) [Хилюта, 94]:

Մասնագիտական գրականության մեջ մեղքի հոգեբանական հայեցակարգի վերաբերյալ քննադատությունները հիմնականում հանգում են հետևյալին:

1. Մեղքի հոգեբանական հայեցակարգի տեսանկյունից դիտավորության բովանդակության տարր է համարվում հանրորեն վտանգավոր արարք կատարած անձի կողմից իր արարքի հանրային վտանգավորության գիտակցումը, իսկ անզգուշության դեպքում արարքի նկատմամբ հոգեբանական վերաբերմունքն օրենսդրական ամրագրում չունի: Հստակ չի երևում, թե որն է այն հիմքը, որն ընդհանուր է դիտավորության և անզգուշության համար, և որը թույլ է տալիս միավորել այս հասկացությունները որպես մեղքի ձևեր [Գաբուզյան, 24]:

2. Մեղքի հոգեբանական հայեցակարգի տեսանկյունից դիտավորության օրենսդրական բնորոշումը թույլ չի տալիս հիմնավորել պատասխանատվությունը աֆեկտի կամ ծանր հարբածության վիճակում հանցանքը կատարելու դեպքերում [Գաբուզյան, 23-24]:

3. Մեղքի հոգեբանական հայեցակարգը տեսական մակարդակում չի կարող բացատրել, թե ինչու անձը չի ենթարկվում քրեական պատասխանատվության արարքի հանցավորությունը բացառող այն հանգամանքների դեպքում, որոնք դասվում են ներելի (մեղավորությունը բացառող) հանգամանքների շարքին (օրինակ, անհաղթահարելի հոգեկան հարկադրանքի դեպքում): Չէ՞ որ այդպիսի հանգամանքների պարագայում դիտավորությունը նատուրալիստական իմաստով առկա է [Дубовик, 55]:

4. Մեղքի հոգեբանական հայեցակարգի համաձայն, դիտավորության գիտակցական հատկանիշն արտահայտվում է անձի կողմից իր արարքի հանրային վտանգավորությունը

գիտակցելով: Սակայն անձի կողմից իր արարքի հանրային վտանգավորության սեփական գնահատականը կարող է լինել խիստ սուբյեկտիվ: Հետևաբար, սեփական արարքի սոցիալական նշանակության սուբյեկտիվ գնահատականը չպետք է հանդես գա որպես դիտավորության (հետևաբար նաև մեղքի) առկայության կամ բացակայության չափանիշ: Անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար էականը պետք է լինի ոչ թե այն, թե ինչպես է նա գնահատել իր կոնկրետ արարքի սոցիալական նշանակությունը, այլ այն, որ նա գիտակցել է իր **արարքի փաստական հանգամանքները** (առկա է դիտավորությունը արժեքանաբանական հայեցակարգի տեսանկյունից) և գիտակցել է այդ փաստական հանգամանքների առկայության պարագայում իր **արարքի հակահրավականությունը** (առկա է մեղքը արժեքանաբանական հայեցակարգի տեսանկյունից) [Назаренко, 100]:

3. Մեղքի արժեքաբանական (նորմափոփոխական) հայեցակարգի համառոտ բնութագիրը

Մեղքի հոգեբանական հայեցակարգի վերոնշյալ թերություններից թույլ է տալիս խուսափել մեղքի արժեքաբանական (նորմափոփոխական) հայեցակարգը:

Ինչպես նշում է պրոֆեսոր Ա. Հ. Գաբուզյանը, ներկայումս այդ հայեցակարգի վրա են հիմնված աշխարհի բոլոր իրավական, ժողովրդավարական պետությունների քրեական օրենսդրությունները: Ըստ այս հայեցակարգի՝ մեղքը արարքի և այն կատարողի պարսավելիությունն է: Մեղքը առկա է այն դեպքում, երբ կատարած արարքի համար անձին կարելի է պարսավել: Իսկ դա հնարավոր է այն դեպքում, երբ անձը գիտակցում է իր արարքի հակահրավականությունը կամ թեև չի գիտակցում, սակայն կարող էր գիտակցել: Սրա հետ կապված՝ անհրաժեշտ է

քննարկել նաև այն հարցը, թե ինչ պետք է հասկանալ արարքի հակաիրավականությունը գիտակցել ասելով: Խոսքն այս դեպքում ոչ թե այն մասին է, որ անձը պետք է գիտակցի, թե իր արարքը կոնկրետ որ օրենքով կամ նորմով է արգելված, այլ ընդհանուր պատկերացում ունենա այն մասին, որ արարքն արգելված է օրենքով, կամ հնարավոր է, որ արգելված է, որովհետև պարսավելի արարք է [Գաբուզյան, 24-26]:

Մեկ այլ բնութագրման համաձայն՝ մեղքը անձի վարքագծի սոցիալ-էթիկական բացասական հատկությունն է, նրա արարքի պարսավելիությունը [Paros, 11]: Այդ մոտեցումն արտահայտվել է նաև Գերմանիայի Դաշնային Հանրապետության Գերագույն դատարանի որոշումներից մեկում՝ «Մեղքը պարսավելիությունն է: Դատարանն անձին պարսավում է այն բանի համար, որ նա որոշել է գործել ոչ իրավաչափ կերպով, թեև կարող էր գործել իրավաչափ կերպով: Պարսավանքի հիմքը կայանում է նրանում, որ անձն ուներ ազատ, պատասխանատու և բարոյական կողմնորոշման հնարավորություն, կարող էր գործել իրավունքի համար կամ իրավունքի դեմ» [Голованова и др., 381]:

Մեղքի արժեքաբանական (նորմատիվիստական) հայեցակարգը հիմնված է անձի կամքի ազատության գաղափարի վրա: Եթե անձը գիտակցել է, որ իր արարքը հակաիրավական է, ուրեմն նա հասկացել է նաև, որ կա այդ իրավիճակում վարքագծի իրավաչափ տարբերակն ընտրելու հնարավորություն: Հետևաբար, հանցանքի կատարումը նրա ազատ կամարտահայտության արդյունք էր, ինչի համար էլ նա արժանի է անհատական պարսավանքի: Վերջին հաշվով հենց դա է մատնանշում կոնկրետ անձի մեղավորությունը [Головненков, 15]:

4. Մեղքը և հանցանքի սուբյեկտիվ կողմը (դիտավորությունը և անզգուշությունը):

4.1. Մեղքի և հանցանքի սուբյեկտիվ կողմի (դիտավորության և անզգուշության) հարաբերակցությունը

Մեղքի արժեքաբանական (նորմատիվիստական) հայեցակարգի համատեքստում դիտավորությունն ու անզգուշությունը ոչ թե մեղքի ձևեր են, այլ հանցանքի սուբյեկտիվ կողմի հատկանիշներ, իսկ մեղքը հանցանքի ինքնուրույն հատկանիշ է՝ հանցակազմից դուրս: Մեղքի այդպիսի ընկալման դեպքում հնարավոր է, որ անձի արարքում առկա լինեն քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր տարրերը և հատկանիշները, այդ թվում՝ սուբյեկտիվ կողմը (դիտավորությունը կամ անզգուշությունը), բայց բացակայի մեղքը (արարքի պարսավելիությունը) [Жалинский, 210]:

Մեղքի արժեքաբանական (նորմատիվիստական) հայեցակարգով առաջնորդվելու պարագայում իրավակիրառողը կոնկրետ դեպքում անձի մեղավորության հարցը լուծելու համար ոչ թե վերլուծում է անձի հոգեբանական վերաբերմունքն իր արարքի և դրա հետևանքի նկատմամբ (դա արվում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի հատկանիշները անձի արարքում հաստատելիս), այլ պարզում է, թե արդյոք անձին կարելի է պարսավել այն բանի համար, որ նա ընտրել է վարքագծի հակաիրավական տարբերակը [Козочкин, 88]:

4.2. Մեղքի գործառույթները (նշանակությունը) գերմանական քրեական իրավունքում

Գերմանիայի Դաշնային Հանրապետության քրեական օրենսդրությունը հիմնված է մեղքի նորմատիվիստական հայեցակարգի վրա: Սակայն, ի տարբերություն հայրենական քրեական իրավունքի, գերմանական քրեական իրավունքում մեղքը դիտարկվում է ոչ միայն որպես **հանցանքի պարտադիր հատ-**

կանիշ, այլև՝ որպես պատիժ նշանակելիս հաշվի առնվող չափանիշ:

Այդ մասին են վկայում Գերմանիայի Դաշնային Հանրապետության քրեական օրենսգրքի մի շարք հոդվածներում առկա այնպիսի ձևակերպումները, որոնք վերաբերում են **մեղքի աստիճաններին**: Օրինակ՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության քրեական օրենսգրքի 57 (ա) պարագրաֆի 1-ին մասի համաձայն, ցմահ ազատազրկման ձևով պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու մասին որոշում կայացնելու պայմաններից մեկն այն է, որ պատժի հետագա կրումը հիմնավորված չէ դատապարտյալի **մեղքի առանձնահատուկ ծանրությամբ** [Головневков, 117]: Կամ, օրինակ, 113 պարագրաֆի 4-րդ մասի համաձայն, դատարանը կարող է պատիժ չնշանակել իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրած անձի նկատմամբ, եթե վերջինիս **մեղքը աննշան է** [Головневков, 224]:

Այսինքն, ըստ գերմանական քրեական իրավունքի, մեղքն իրականացնում է ինչպես **հիմնավորող գործառույթ** (անձի մեղավորության հաստատումն անհրաժեշտ է նրա նկատմամբ պատժի նշանակումը հիմնավորելու համար), այնպես էլ **չափող գործառույթ** (անձի մեղավորության աստիճանի որոշումն անհրաժեշտ է նշանակվող պատժի տեսակի և չափի որոշման կամ պատժից ազատելու հարցի լուծման համար) [Жалинский, 324]:

Այլ կերպ ասած, եթե դիտավորությունն ու անզգուշությունը պատասխանում են **«ինչպե՞ս է անձը կարգավորել իր վարքագիծը»** հարցին, ապա մեղքի հիմնավորող գործառույթը պատասխանում է **«ինչու՞ է անձը ենթակա քրեական պատասխանատվության»** հարցին, իսկ մեղքի չափող գործառույթը՝ **«արդյո՞ք քրեական պատասխանատվության ենթակա անձը պետք է պատիժ կրի, եթե այո, ապա ի՞նչ չափով»** հարցերին:

Գերմանական քրեական իրավունքի գիտության մեջ ընդունված է, որ դիտավորյալ հանցանքների դեպքում մեղքի աստիճանն ավելի բարձր է, քան անզգույշ հանցանքների դեպքում: Դա հիմնավորվում է նրանով, որ դիտավորյալ հանցանք կատարած անձի մեղավորությունը բնութագրվում է վարքագծի սահմանված իրավական կանոնների նկատմամբ թշնամական կամ անտարբեր վերաբերմունքով, իսկ անզգույշ հանցանք կատարած անձի մեղավորությունը բնութագրվում է իրավակարգում բովանդակվող՝ անհրաժեշտ զգունության պահանջի նկատմամբ ոչ հոգատար վերաբերմունքով [Жалинский, 227]:

Ինչպես տեսնում ենք, մեղքի **չափող գործառույթը** սերտորեն կապված է հանցանքի սուբյեկտիվ կողմի դրսևորումների՝ **դիտավորության և անզգուշության** հետ: Դա է պատճառը, որ գերմանական քրեական իրավունքի գիտության մեջ «դիտավորություն» և «անզգուշություն» եզրույթները երբեմն օգտագործվում են ոչ միայն հանցանքի սուբյեկտիվ կողմի դրսևորումների, այլ նաև անձի մեղավորության աստիճանների իմաստով:

4.3. Մեղքի չափող գործառույթի բացակայությունը հայրենական քրեական իրավունքում

Նոր քր.օր.-ի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը մեղքին **չի վերապահել չափող գործառույթ**, քանի որ նոր քր.օր.-ում բացակայում են գերմանական քրեական օրենսդրությանը բնորոշ՝ մեղքի աստիճանների մասին նշումները: Այսպես, պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները սահմանելիս օրենսդիրը որպես պատժի տեսակը և չափը որոշելու չափանիշներ ամրագրել է հանցագործությամբ պատճառված վնասի բնույթը և չափը, հանցագործության եղանակը, տեղը, ժամանակը, հանցագործության շարժառիթները և նպատակները, **դիտավորության կամ անզգուշության տեսակը**, պատասխանատ-

վությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, ինչպես նաև նշանակվող պատժի՝ հանցավորի վերասոցիալականացման և իրավահպատակ վարքագծի ձևավորման գործընթացի ու նրա ընտանիքի կենսապայմանների վրա ազդեցությունը (քր.օր.-ի 69-րդ հոդվածի 2-րդ մաս): Անձի մեղքի կամ մեղավորության աստիճանների մասին որևէ նշում չկա նաև քր.օր.-ի 70-րդ և 71-րդ հոդվածներում (պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները) կամ այլ նորմերում:

Վերոգրյալը հիմք է տալիս պնդելու, որ նոր քր.օր.-ը մեղքին վերապահել է **միայն հիմնավորող գործառույթ**: Հետևաբար՝ հայրենական քրեական իրավունքում դիտավորությունը և անզգուշությունը չունեն մեղքի հետ այնպիսի սերտ կապ, ինչպիսին գերմանական քրեական իրավունքում է: Նոր քր.օր.-ի համատեքստում դիտավորությունն ու անզգուշությունը կարող են դիտարկվել **միայն որպես սուբյեկտիվ կողմի դրսևորումներ** (ինչի մասին ուղղակիորեն նշված է քր.օր.-ի 24-րդ հոդվածի 1-ին մասում), բայց ոչ որպես մեղքի աստիճաններ կամ մեղքի ձևեր:

5. Ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքի օրենսդրական սահմանումը և մեղքի արժեքաբանական (նորմատիվիստական) հայեցակարգին դրա համապատասխանության խնդիրը

5.1. Մեղքի և հանցանքի սուբյեկտիվ կողմի (դիտավորության ու անզգուշության) օրենսդրական սահմանումները նոր քր.օր.-ում

Նոր քր.օր.-ի 23-րդ հոդվածի («Մեղքը») 2-րդ մասը սահմանում է՝ «Սույն օրենսգրքով նախատեսված, պատժի սպառնալիքով արգելված արարքը համարվում է մեղավորությամբ կատարված, եթե այն կատարողը գիտակցել է իր արարքի հակաիրավականու-

թյունը կամ թեև չի գիտակցել, բայց կարող էր գիտակցել դա»:

Ինչպես տեսնում ենք, մեջբերված դրույթի բովանդակությունը համահունչ է մեղքի նորմատիվիստական (արժեքաբանական) հայեցակարգին, և դրանում նշում չկա դիտավորության կամ անզգուշության մասին: Մեղքի նորմատիվիստական (արժեքաբանական) հայեցակարգին համահունչ է նաև նոր քր.օր.-ի 24-րդ հոդվածի («Դիտավորությունը և անզգուշությունը») 1-ին մասը, որի համաձայն՝ հանցանքի սուբյեկտիվ կողմը (**ոչ թե մեղքը – Մ.Մ.**) կարող է դրսևորվել դիտավորությամբ կամ անզգուշությամբ:

5.2. Ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքի օրենսդրական սահմանումը նոր քր.օր.-ում

Նոր քր.օր.-ի 6-րդ հոդվածում ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքը սահմանվել է հետևյալ կերպ՝ «Քրեական պատասխանատվության ենթակա չէ այն ֆիզիկական անձը, որը սույն օրենսգրքով նախատեսված արարքը կատարել է առանց մեղքի կամ կատարել է անզգուշությամբ այն դեպքում, երբ օրենքը քրեական պատասխանատվություն է նախատեսում տվյալ արարքը միայն դիտավորությամբ կատարելու համար»:

Կարծում ենք, որ ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքի այդպիսի սահմանումն ամբողջությամբ չի համապատասխանում նոր քր.օր.-ի 23-րդ հոդվածում տրված՝ մեղքի օրենսդրական սահմանմանը և, հետևաբար, համահունչ չէ մեղքի արժեքաբանական (նորմատիվիստական) հայեցակարգին: Մասնավորապես, մեր կարծիքով նոր քր.օր.-ի 6-րդ հոդվածում ավելորդ է «կամ կատարել է անզգուշությամբ այն դեպքում, երբ օրենքը քրեական պատասխանատվություն է նախատեսում տվյալ արարքը միայն դիտավորությամբ կատարելու համար» ձևակերպու-

մը: Այդ պնդումը հիմնավորվում է ստորև ներկայացվող փաստարկներով:

5.3. Հանցանքի հատկանիշները և անձի արարքում դրանց հաստատման հերթականությունը

ՀՀ նոր քր.օր.-ի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցանք է համարվում սույն օրենսգրքով նախատեսված, պատժի սպառնալիքով արգելված, հանցագործության սուբյեկտի կողմից մեղավորությամբ կատարված արարքը»: Նշված սահմանումից բխում է, որ հանցանք համարվելու համար անձի արարքը պետք է օժտված լինի հետևյալ հատկանիշներով՝

1. քրեական օրենսգրքով նախատեսված լինելը,
2. պատժի սպառնալիքով արգելված լինելը,
3. հանցագործության սուբյեկտի կողմից կատարված լինելը,
4. մեղավորությամբ կատարված լինելը:

Հանցանքի սահմանման մեջ նշված հատկանիշների այդպիսի հերթականությունը պատահական չէ: Մեղավորությամբ կատարված լինելու, որպես հանցանքի հատկանիշի առկայության հարցին հնարավոր է անդրադառնալ միայն այն բանից հետո, երբ հաստատվել են հանցանքի մյուս հատկանիշները: Այսինքն, նախ անհրաժեշտ է հաստատել, որ անձի կատարած արարքը **հակաիրավական է** (նախատեսված է քրեական օրենսգրքով և արգելված է պատժի սպառնալիքով), որից հետո միայն անդրադառնալ այն հարցին, թե արդյոք անձը գիտակցել է (կարող էր գիտակցել) իր արարքի հակաիրավականությունը, այսինքն՝ արդյոք նա արարքը կատարել է **մեղավորությամբ**:

Անձի արարքում հանցանքի հատկանիշների հաստատման այդպիսի հերթականությունը բխում է նաև քրեադատավարական օրենսդրության տրամաբանությունից: Այսպես,

ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքի 342-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերոհիկտ կայացնելիս դատարանը ներկայացված հաջորդականությամբ լուծում է հետևյալ հարցերը.

- 1) ապացուցված են արդյոք մեղադրյալին վերագրվող փաստական հանգամանքները (արարքը).
- 2) ապացուցված է արդյոք այդ արարքի քրեական հակաիրավականությունը.
- 3) ապացուցված է արդյոք մեղադրյալի կողմից այդ արարքը կատարելը.
- 4) ապացուցված է արդյոք մեղադրյալի մեղավորությունը տվյալ արարքը կատարելու մեջ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն, նշված հարցերից որևէ մեկին ժխտական պատասխան տալու դեպքում դատարանը կայացնում է արդարացման վերոհիկտ: Դա նշանակում է, որ եթե անձի արարքի **քրեական հակաիրավականությունը** ապացուցված չէ, ապա այլևս անհրաժեշտ չէ անդրադառնալ նրա **մեղավորության** հարցին:

Մեղադրյալի մեղավորության հարցին դատարանը պետք է անդրադառնա այն դեպքում, երբ դրական պատասխան է տվել նախորդ երեք հարցերին: Հետևաբար, մեղքի բացակայության մասին եզրահանգում կարելի է անել միայն այն դեպքում, երբ՝

- 1) ապացուցված են մեղադրյալին վերագրվող փաստական հանգամանքները,
- 2) ապացուցված է այդ արարքի քրեական հակաիրավականությունը,
- 3) ապացուցված է մեղադրյալի կողմից այդ արարքը կատարելը,
- 4) ապացուցված է, որ անձը չի գիտակցել և տվյալ իրադրությունում չէր կարող գիտակցել իր արարքի հակաիրավականությունը:

5.4. Անձի արարքում հանցանքի հատկանիշների առկայության հարցի պարզումը հիպոթետիկ օրինակի հիման վրա

Ենթադրենք, անձն անզգուշությամբ ոչնչացրել է ուրիշի գույքը՝ պատճառելով առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս: Արդյո՞ք անձի արարքը հանցանք է, եթե ոչ, ապա հանցանքի հատկանիշների հաստատման ո՞ր փուլում ենք մենք հանգում նման եզրակացության:

Ինչպես արդեն գիտենք, առաջին հերթին անհրաժեշտ է պարզել, թե արդյոք անձի արարքը համապատասխանում է քրեական օրենքով նախատեսված որևէ հանցակազմի հատկանիշներին:

Գույքը ոչնչացնելու կամ վնասելու համար քրեական պատասխանատվությունը սահմանված է նոր քր.օր.-ի 264-րդ հոդվածով: Հոդվածի վերնագրում և դիսպոզիցիայում նշված չէ, թե սուբյեկտիվ կողմից ինչպես է դրսևորվում այդ հանցանքը՝ դիտավորությամբ, թե անզգուշությամբ: Սակայն, նոր քր.օր.-ի 24-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է՝ «Անզգուշությամբ կատարված արարքը հանցանք է, եթե սույն օրենսգրքի Հատուկ մասով դա նախատեսված է»: Նոր քր.օր.-ի 264-րդ հոդվածում անզգուշության մասին նշումը բացակայում է: Նոր քր.օր.-ում չկա նաև գույքն անզգուշությամբ ոչնչացնելու կամ վնասելու համար քրեական պատասխանատվություն սահմանող առանձին հոդված: Հետևաբար՝ գույքը ոչնչացնելը կամ վնասելը քրեորեն պատժելի է միայն այն դեպքում, եթե դա կատարվել է դիտավորությամբ: Իր հերթին դա նշանակում է, որ դիտավորությունը նոր քր.օր.-ի 264-րդ հոդվածով նախատեսված հանցանքի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է:

Ելնելով վերոգրյալից՝ գալիս ենք այն եզրակացության, որ բերված օրինակում անձի արարքը չի համապատասխանում քր.օր.-ով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշներին, հետևաբար բացակայում է հանցանքի առաջին հատկանիշը՝ **քրեական օ-**

րենսգրքով նախատեսված լինելը: Տվյալ դեպքում այլևս վերանում է անձի **մեղավորության** հարցը քննարկելու անհրաժեշտությունը:

Ենթադրենք, քննարկվող օրինակում անձն առանձնապես խոշոր չափերի գույքն անզգուշությամբ ոչնչացնելու համար ապօրինաբար դատապարտվում է քր.օր.-ի 264-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով: Կարելի՞ է արդյոք պնդել, որ դրանով ուղղակիորեն խախտվում է **ըստ մեղքի պատասխանատվության** սկզբունքը: Կարծում ենք՝ ոչ: Տվյալ դեպքում անձի ապօրինի դատապարտմամբ ուղղակիորեն խախտվում է **օրինականության** սկզբունքը, ըստ որի՝ ոչ ոք չի կարող ենթարկվել քրեական պատասխանատվության այն արարքի համար, որը կատարման պահին հանցանք չի համարվել (նոր քր.օր.-ի 4-րդ հոդվածի 1-ին մաս):

5.5. Ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքի օրենսդրական սահմանման մեջ դիտավորության և անզգուշության մասին նշումների ավելորդության լրացուցիչ հիմնավորումներ

1) «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն, օրենսդրական ակտի հոդվածների վերնագրերը պետք է համապատասխանեն հոդվածների բովանդակությանը: Հետևաբար, **ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքի** օրենսդրական սահմանման մեջ պետք չէ նշել այնպիսի պայմաններ, որոնք ուղղակի կապ չունեն մեղքի հետ և վերաբերում են **հանցանքի այլ հատկանիշին** (քրեական օրենսգրքով նախատեսված լինելուն):

2) Եթե առաջնորդվենք այն տրամաբանությամբ, որ ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքի օրենսդրական սահմանման մեջ արդարացված է ոչ միայն մեղքին, այլև հանցանքի ուրիշ հատկանիշին (քրեական օ-

րենսագրքով նախատեսված լինելուն) վերաբերող պայմանի (հանցակազմի **սուբյեկտիվ կողմի** առկայության) ամրագրումը, ապա նույնքան արդարացված պետք է համարել, օրինակ, այդ հոդվածում նաև հավասարազոր՝ հանցակազմի **օբյեկտիվ կողմի** առկայության պայմանի ամրագրումը: Սակայն անհեթեթե կլինի ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքին վերաբերող հոդվածում ամրագրել, օրինակ, դրույթ այն մասին, որ քրեական պատասխանատվության ենթակա չէ այն ֆիզիկական անձը, որը քրեական օրենսգրքով նախատեսված արարքը կատարել է առանց բռնություն գործադրելու այն դեպքում, երբ օրենքը քրեական պատասխանատվություն է նախատեսում տվյալ արարքը միայն բռնություն գործադրելով կատարելու համար:

3) Ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքի գործող օրենսդրական սահմանման մեջ դիտավորության և անզգուշության մասին նշումը կարող է թողնել սխալ տպավորություն, թե դիտավորությունն ու անզգուշությունը նոր քր.օր.-ում դիտարկվում են որպես մեղքի ձևեր, ինչպես դա նախկին քրեական օրենսգրքում էր: Դիտավորությունն ու անզգուշությունը, իհարկե, որոշակիորեն կապված են մեղքի հետ առնվազն այն պատճառով, որ դրանց հաստատումն անհրաժեշտ նախադրյալ է անձի մեղավորության հարցին անդրադառնալու համար: Սակայն դրանց բացակայությունը ոչ թե ինքնաբերաբար նշանակում է նաև **մեղքի** բացակայություն, այլ **մեղքի առկայության հարցին անդրադառնալու անհրաժեշտության** բացակայություն:

4) Քր.օր.-ի 6-րդ հոդվածի ավելորդ ձևակերպումը («կամ կատարել է անզգուշությամբ այն դեպքում, երբ օրենքը քրեական պատասխանատվություն է նախատեսում տվյալ արարքը

միայն դիտավորությամբ կատարելու համար») վերացնելը չի առաջացնի օրենսդրական բաց, քանի որ այդ ձևակերպման հիմքում ընկած գաղափարն արդեն իսկ ամրագրված է նոր քր.օր.-ի 24-րդ հոդվածի 2-րդ մասում՝ «Անզգուշությամբ կատարված արարքը հանցանք է, եթե սույն օրենսգրքի Հատուկ մասով դա նախատեսված է»:

Եզրակացություն

Նոր քր.օր.-ում մեղքի արժեքաբանական հայեցակարգի ամրագրումն առաջադիմական քայլ էր: Սակայն նոր քր.օր.-ի՝ մեղքին վերաբերող իրավակարգավորումների համակարգային վերլուծությունը հիմք է տալիս այնդեպի, որ օրենսդիրը, ձգտելով մեղքի ինստիտուտը ամրագրել նորմատիվիստական (արժեքաբանական) հայեցակարգին համահունչ, այնուամենայնիվ չի կարողացել խուսափել մեղքի հոգեբանական հայեցակարգին բնորոշ որոշ ձևակերպումներից: Պատկերավոր ասած՝ նոր քր.օր.-ում մեղքի նոր հայեցակարգը մատուցվել է որոշակիորեն հին «փաթեթավորմամբ»:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք նոր քր.օր.-ի 6-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Քրեական պատասխանատվության ենթակա չէ այն ֆիզիկական անձը, որը սույն օրենսգրքով նախատեսված արարքը կատարել է առանց մեղքի, այսինքն՝ չի գիտակցել իր արարքի հակահրավականությունը և տվյալ իրադրությունում չէր կարող գիտակցել դա»:

Կարծում ենք, ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքի այդպիսի օրենսդրական սահմանումն առավել համահունչ կլինի մեղքի արժեքաբանական (նորմատիվիստական) հայեցակարգին:

Չրականության ցանկ

1. Голованова Наталья, Еремин Владимир, Игнатова Милена, Козочкин Иван, Крылова Наталья, Серебrenникова Анна. Уголовное право зарубежных государств. Под ред. И. Козочкина. М.: Омега-Л, 2003, 576 с.:
2. Головиненков Павел. Уголовное уложение (Уголовный кодекс) Федеративной Республики Германия. М.: Проспект, 2017, 312 с.
3. Жалинский Альфред. Современное немецкое уголовное право. М.: Проспект, 2006, 560 с.
4. Рарог Алексей. Основные принципы уголовного права ФРГ (критический анализ). Автореф. дис. ... канд. юрид. наук. М.:, 1966, 20 с.
5. Չարույցան Արա: «Մեղքի հասկացության շուրջ»: Բանբեր Երևանի համալսարանի. իրավագիտություն: 2021, № 2, էջեր 22-27:
6. Дубовик Ольга. «Вина в немецком уголовном праве». Правоведение. 1993. №3. сс. 51-60:
7. Козочкин Иван. «Основания ответственности в современном уголовном праве». Государство и право. 2010. № 10. сс. 83-92:
8. Назаренко Геннадий. «Содержательный и законодательно-технический аспекты принципа субъективного вменения (вины) в уголовном праве России». Вестник Нижегородской академии МВД России. 2020. № 2., сс. 97-104:
9. Хилюта Вадим. «Вина в уголовном праве: поиск новой концепции». Юристы-Правоведь. 2021, N 4 (99), сс. 93-99.
10. ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 4-ի նիստի N 25 արձանագրային որոշումը ՀՀ նոր քրեական օրենսգրքի հայեցակարգին հավանություն տալու մասին: 16 հոկտեմբեր 2022, <https://www.arlis.am/Annexes/4/ardz.N25-4-15.doc>
11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրք, 16 հոկտեմբեր.2022, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=154763>
12. ՀՀ քրեական օրենսգրք, 16 հոկտեմբեր 2022, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=153080>
13. ՀՀ օրենքը «Նորմատիվ իրավական ակտերի մասին», 16 հոկտեմբեր.2022, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=120733>

PRINSIPLE OF LIABILITY IN ACCORDANCE WITH THE GUILT IN THE NEW CRIMINAL CODE OF THE REPUBLIC OF ARMENIA

Misak Markosyan

Candidate of Legal Sciences, Associate Professor

Educational Complex of Police of RA

misakmmm100@gmail.com

Abstract

The article presents the brief descriptions of the psychological and value-based (normativistic) concepts of guilt as well as the grounds for transition from the psychological concept of guilt to that of value-based (normativistic) in the new Criminal Code of RA, the main disadvantages of the psychological concept are pointed out.

The author presents the correlation between the subjective side (intention and negligence) of guilt and offence in the context of value-based (normativistic) concept of guilt, analyzes the functions of guilt (supporting and measuring) in the German criminal law. The author comes to the conclusion that in the new Criminal Code of RA, the legislature assigned only the supporting function to guilt. Consequently, intention

and negligence are not as closely related in national criminal law as they are in German criminal law. In the author's opinion intention and negligence can be viewed upon only as demonstrations of subjective side but not as degrees of guilt or types of guilt.

Based on the systematic analysis of the guilt-related legal regulations of the new Criminal Code, the author arrives at a conclusion that the legislative definition of the principle of liability in accordance with the guilt, stipulated by the new Criminal Code of RA, does not fully comply with the legislative definition of guilt arising from the value-based (normativistic) concept of guilt.

Based on the results of the research, the author makes a legislative proposal related to the new definition of the principle of liability in accordance with the guilt.

Keywords: offence, guilt, psychological concept, value-based concept, intention, negligence.

Ներկայացվել է՝ 18.10.2022թ.

Ուղարկվել է գրախոսման՝ 02.11.2022թ.